ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2013 թվականի թիվ 7- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1- ին մասի 1/ կետով, հիմք ունենալով Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի՝ «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՕ-222-Ն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 12-րդ հոդվածները , «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի՝ <Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 10-ի N 837-Ն որոշման 1-ին հավելվածի դրույթները՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակը և դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման գործողությունը տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

3.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012թ. հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակը նոր խմբագրությամբ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011թ. հունվարի 17-ի N 5-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 11-Ա որոշումը:

4.Որոշման կատարման ապահովումը դնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանի վրա:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. հունվարի 25
ք.Իջևան